



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 24Ա

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի միջնորդությունը, Ս.Նալբանդյանի աշխատանքային փորձը, պարտականությունների կատարման նկատմամբ բարձր պատասխանատվությունը և ղեկավարվելով «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի դատական նիստերի քարտուղար Սվետլանա Նալբանդյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգել՝ մինչև 2018 թվականի մարտի 30-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 27-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. հոկտեմբերի 12
ք. Երևան